

«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՔԻՄԻԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ՝  
ԻՆՏԵՐԱԿՏԻՎ «ԲԱՆԱՎԵՃ»Ճ ՄԵԹՈԴԻ ՄԻՋՈՑՈՎ»

Առարկան՝ Քիմիա

Հետազոտող ուսուցիչ՝ Թամարա Ադամյան

Ուսումնական հաստատություն՝ Շնողի Հ. Մելիքսեթյանի անվան  
միջնակարգ դպրոց

Երևան 2022

# Ներածություն

Մանկավարժության մեջ կրթության նպատակը միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին և տվյալ ժամանակաշրջանի համար ձևավորել լիարժեք ու ակտիվ անդամներ: Բայց պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ ու պահանջումների բավարարման անհրաժեշտությամբ, ժամանակ առ ժամանակ փոփոխվում են կրթության խնդիրները:

Որպեսզի աշակերտների մոտ զարգանա վերլուծական միտքը կամ, այսպես կոչված՝ քննադատական մտածողությունը, անհրաժեշտ է ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ սովորողները առավելագույնս ներգրավված լինեն վերջինիս քննարկումներին ու իրենց մասնակցությամբ դառնան ավելի անկաշկանդ, ինքնուրույն, ինքնավստահ ու լի մոտիվացիայով:

Քննադատական մտածողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման և վերլուծման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռքբերում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում և իրավիճակի ու դեպքերի բազմակողմանի վերլուծության կարողություն ու հմտություն:

Ժամանակակից աշակերտը ապրում է բարդ և հակասական աշխարհում, որտեղ արագ տեմպերով և ռիթմով ընթացան տեխնիկական և տեխնոլոգիական վերափոխումները, որոնք նորանոր պահանջներ են դնում ձևավորման շրջանում գտնվող աշակերտի առջև:

Ինֆորմացիայի բուռն հեղեր անդրադառնում է վերջինիս վրա. նրան ձգում է այն ամենը, ինչը դինամիկ է, հուզիչ. դա կարող է ազդարարել վերահաս՝ տեղեկատվական վտագավոր խմբերում ներգրավվելու վտանգի մասին :

Այստեղ օգնության է գալիս քննադատական մտածողությունը, որը, ընդլայնելով աշակերտի աշխարհայացքի սահմանները, թույլ չի տալիս իրագործել վերոնշյալ սխալները կամ, առնվազն, զերծ է պահում հնարավոր վտանգավոր վերջնարդյունքից:

Կան մի շարք գործիքակազմեր՝ մեթոդներ, որոնց միայն տեղին ու ճիշտ կիրառումը կհանգեցնի ցանկալի վերջնարդյունքի:

Դասավանդման պասիվ մեթոդները, որոնք անվանում ենք նաև ուսուցչակենտրոն, չեն լուծում այն խնդիրները, որոնք կարող են ի հայտ գալ քննադատական մտածողությունը զարգացնելիս: Ժամանակի դինամիկային զուգընթաց, առվել նպատակային են համարվում ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդները, որոնցից առաջինը ուսուցման ոչ դյուրին գործում ենթադրում է ուսուցիչ-աշակերտ փոխադարձ երկխոսություն, իսկ երկրորդը, բացի նշվածից, պարտադիր ապահովում է եռաստիճան կապ. Ուսուցիչ-աշակերտ-աշակերտ, որն էլ հանգեցնում է խնդրի առավել ծավալուն քննարկմանը և լուծումների որոնմանը:

Սովորողների համար, անհատական առանձնահատկություններին համապատասխան պայամաններ ստեղծելով, կարելի է զարգացնել քննադատական մտածողությունը: Սրա համար կիրառվում են հստակ սահմանված փուլեր՝

1. խթանում,
2. իմաստավորում,
2. կշռադատում:

ԽԻԿ համակարգի օժանդակությամբ, համեմատությունների, համադրությունների, վերլուծությունների ու եզրահանգումների միջոցով, իմաստավորվում են սովորողների գիտելիքները և կշռադատվում է ուսուցանվող նյութը:

Ուսուցման ԽԻԿ համակարգը որի հիմքում ընկած է ուսուցման սովորողակենտրոն մոտեցումը: Նման ուսուցման դեպքում յուրաքանչյուր սովորող դառնում է դասի գործուն մասնակից: Ի տարբերություն ուսուցման պասիվ գործընթացի այս դեպքում՝ դասի կենտրոնում սովորողներն են, ովքեր ոչ միայն յուրացնում են ուսումնական նյութը այլև այդ ընթացքում ձեռք են բերում ինքնուրույն մտածելու, բանավիճելու, հաղորդակցվելու, միմյանց լսելու, միմյանցից սովորելու և այլ կարևոր կարողություններ և հմտություններ: Ուսուցիչն այս դեպքում ուսումնական գործընթացը համակարգողի սովորողներ աշխատանքը կազմակերպողի խորհրդատուի դերում է: ԽԻԿ համակարգը իր մեջ ներառում է դասի ընթացքի երեք փուլ՝

Խթանման (10 ր.)

Իմաստի ընկալման (15 ր.)

Կշռադատման , գնահատման:

Խթանման փուլի նպատակն է՝ սովորողների ուշադրությունը կենտրոնացնել դասվանդվող նյութին: Այս փուլում ուսուցչի առջև խնդիրներն են՝ շարժել աշակերտի հետաքրքրությունը, սևեռել նրա ուշադրությունը և ուղղորդել տվյալ թեմայի վրա, հիշեցնել, վեր հանել ունեցած գիտելիքները և կապել դրանք նորի հետ, գտնել խթանումն իրականացնող արդյունավետ մեթոդներ: Այս դասի համար , այս փուլում ընտրել եմ Մտագրոհ մեթոդը (Մտքերի տարափ) սա խմբային աշխատանքի պարզ , բայց շատ արդյունավետ մեթոդ է :

Իմաստի ընկալման փուլ- Նպատակն է՝ իրականացնել ուսուցանվող նյութի բովանդակության ընկալումը: Այս փուլում երկու կարևոր խնդիր կա՝ հասցնել նյութի բովանդակությունը սովորողներին , կիրառել այնպիսի մեթոդներ որոնց դեպքում սովորողները գործուն մասնակցություն կունենան գիտելիքի ձեռքբերման գործընթացին:

Կշռադատման փուլ - նպատակն է՝ հնարավորություն տալ սովորողների ն կիրառել արդեն սովորածն ու յուրացրածը: Ուսուցչի խնդիրն է ճիշտ օգտագործել այդ առումով սովորողների ուժերը: Որի համար նպատակահարմար եմ գտել կիրառել Վենի դիագրամը, այս մեթոդը կարելի է օգտագործել նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները, երևույթները, անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում նշվում են ընդհանրությունները իսկ եզրերին առանձնահատկությունները:

Գնահատման փուլի նպատակն է՝ դասընթացի ժամանակ սովորողների ձեռք բերած գիտելիքների ստուգումը , որը կատարել եմ ընթացիկ գնահատման ուսուցանող ձևով , դրա շնորհիվ ակտիվանում է սովորողների ոչ միայն իմացական գործունեությունն, այլ նաև բարձրանում է ուսման արդյունավետությունը և որակը: Գնահատման այս ձևը մեզ՝ ուսուցիչներին հնարավորություն է տալիս էլ ավելի բարձրացնել դասավանդման արդյունավետությունը՝ ելնելով սովորողների կողմից

դասի յուրացման աստիճանից:

## **Աշխատանքի նպատակն է պարզել, թե՛**

1. որքանո՞վ է ուսուցման ժամանակակից ինտերակտիվ՝ բանավեճի մեթոդը նպաստում քիմիայի դասերի ժամանակ աշակերտների քննադատական մտածողության զարգացմանը,
2. որքանո՞վ են աշակերտները ներգրավվում բանավեճի մեթոդով կառուցված ինտերակտիվ դասապրոցեսին,
3. որքանո՞վ է իրատեսական այս մեթոդի կիրառումը քիմիայում՝ որպես քննադատական մտածողության զարգացման գործիք:

## **Աշխատանքի խնդիրներն են՝**

1. դիտարկել սովորողների քննադատական մտածողության դերն ու անհրաժեշտությունը՝ դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառման ժամանակ,
2. ուսումնասիրել բանավեճ մեթոդի մեթոդաբանական հիմքերը և հիմնավորել վերջինիս հնարավորությունները,
3. հիմնավորել այն եզրակացությունը, որ վերոնշյալ մեթոդը, որպես ինտերակտիվ մանկավարժական մեթոդ, նպաստում է դպրոցականների քննադատական մտածողության զարգացմանը,
4. իրականացնել գրույցի, դիտման մեթոդները,
5. դիտարկել աշակերտների ներգրավվածության աստիճանը մեթոդի կիրառման ժամանակ:

Ըստ Ջոն Բարելի՝ քննադատաբար մտածող մարդը դրսևորում է հետևյալ հատկանիշները.

1. համառություն ցուցաբերելով կարողանում է լուծել խնդիրները,
2. բաց է համագործակցության համար,

3. կարողանում է լսել դիմացինին, ինչպես նաև՝ ապրումակցել նրան,
4. վերահսկում է իր իմպուլսիվությունը,
5. հանդուրժող է,
6. խնդիրները դիտարկում է տարբեր տեսամկյուններից,
7. հանդուրժող է իր տեսակետից տարբերվող տեսակետների նկատմամբ,
8. կարողանում է գուգորդական կապեր հաստատել երևույթների միջև,
9. կարողանում է կառուցել տրամաբանական եզրակացություններ:

Բազմաթիվ ուսումնասիրություններից հետո, տարբեր հեղինակներ յուրովի են սահմանել քննադատական մտածողությունը:

Քննադատական մտածողության առաջատար դեմքերից մեկը՝ Ռոբերտ Էննիսը նշել է, որ քննադատական մտածողությունը «ողջամիտ» մտածողություն է, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել: Իր մյուս աշխատության մեջ հանգել է այն եզրակացությանը, որ քննադատաբար մտածելու նպատակն է գտնել ճշմարտությունը, կամ ճշմարտությանը ամենամոտ գտնվող պատասխանը:

Ըստ Սալի Գլենի, քննադատական մտածողությունը դա փիլիսոփայական կողմնորոշում է դեպի մտածողություն, ինչպես նաև իմացական գործընթաց, որին հատուկ է պատճառաբանված լինելը:

Լիզա Ցուին Լոս Անջելեսում կատարած իր հետազոտությունների արդյունքում հանգեց այն մտքին, որ քննադատական մտածողության զարգացումը մեծապես կախված է նաև դասավանդման մեթոդներից, որը հավանության արժանացավ ուսումնասիրողների մի մեծ խմբի:

Գարիսոնը խիստ կարևորում է ուսուցչի դերը քննադատական մտածողության զարգացման գործում: Նա նշում է, որ ուսուցիչը պարտավոր է ուսանողին քննարկումների միջոցով դրդել վիճարկելու տարբեր գաղափարներ,

ենթադրություններ, տեսություններ, նորմեր և կանոններ, քանի որ քննադատական մտածողությունը սովորողից պահանջում է ստաձնել գաղափարներ ու խնդիրներ քննելու և հետևություններ անելու պատասխանատվություն:

Անկախ այս եզրահանգումներից, կարելի է պնդել, որ դասավանդողն առաջինը ինքը պետք է պատրաստ լինի վիճարկելու սեփական արժեքներն ու գաղափարները և դրանով իսկ օրինակ ծառայի իր աշակերտների առջև: Եվ քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը պետք է լինի ն՝ առարկայական ծրագրի, և՛ ուսումնական պլանի զարգացման հիմքում:

## **Գործնական համատեքստ**

Ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ժամանակ տեղի են ունենում աշակերտ-ուսուցիչ և աշակերտ-աշակերտ համագործակցությունը:

ուսուցչի խնդիրն է՝

- . բացատրել կատարվելիք աշխատանքի նպատակը,
- . դասի սկզբնամասում հարտարարել թեման և հնչեցնել հարցերը ,
- . բաժանել աշակերտներին խմբերի,
- . տալ հանձնարարություններ,
- . չանտեսել սխալ մեկնաբանությունները, բայց և միանգամից չտալ ճիշտ պատասխանները,
- . օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն ընդհանուր նշանակություն, և որը կքննադատի միայն աշակերտի կողմից հնչեցված միտքը, ոչ թե՝ այն բարձրաձայնած աշակերտին:

Քննադատական մտածողությունը զարգացնելու նպատակով <<Բանավեճ>> մեթոդի կիրառման արդյունավետությունը մեծապես կախված է նաև ուսուցչի վարպետությունից.

ուսուցիչը պետք է լիարժեք տիրապետի տվյալ մեթոդին, կարողանա վերջինս

տեղին ու ժամանակին կիրառել՝ աշխատանքը դարձնելով ոչ միայն արդյունավետ, այլև ամեն երեխայի համար հաճելի, ընդունելի ու կարևոր՝ այդպիսով նպաստելով սովորողների քննադատական մտածողության զարգացմանը:

## **Ինչպե՞ս ստեղծել բանավեճային մթնոլորտ**

**Բանավեճ-** վեճ, վիճաբանություն, բանավոր քննարկում, վիճելի կամ հրատապ հարցի շուրջ երկու կողմերի տարբեր հիմնավորումների, փաստարկների, պնդումների ու ապացույցների ձևակերպում ու մտքերի հանրային, բանավոր արտահայտում: Բանավեճը պետք է լինի նյութերի հավաքագրման և դրանց միջոցով փաստարկների ձևակերպման արդյունք: Առանձնահատկությունն այն է, որ մասնակիցները ոչ թե մեկը մյուսին ապացուցեն իրենց ճշմարտացիությունը, այլ՝ երրորդ կողմին. այս դեպքում ուսուցչին:

Բանավեճն ընդհանրապես պետք է անցկացվի բարյացակամության և յուրաքանչյուրի նկատմամբ ուշադրության մթնոլորտում: Նույնիսկ սխալի դեպքում չպետք է բարձրաձայն դիտողություն անել: Դասի սկզբնական փուլում առաջադրանքները պետք է ձևակերպել այնպես, որոնք աշակերտներին կմղեն հակասությունների քննարկմանը բանավեճի մեջ, թույլ կտան զարգացնել ստեղծագործական մտածողությունը, մտքերը:

## **Մեխանիզմ**

Յուրաքանչյուր քաղաքակիրթ բանավեճ ունի հետևյալ հիմունքները.

- Կարծիքների, տեսակետների և դիրքորոշումների փոխանակում:
- Ընդհանուր նպատակ. բանավեճը հաջողվում է միայն այն դեպքում, երբ մասնակիցները միավորվում են մեկ ընդհանուր նպատակի շուրջ, այն է՝ առավելագույնս պաշտպանել սեփական թիմի դիրքորոշումը:
- Հարգանք դիմացինի նկատմամբ. բանավիճողը պետք է հարգալից լինի դիմացինի հանդեպ, անկախ այն բանից, թե նա ինչ տեսակետ է արտահայտում:



1. Երկու կողմի առկայություն. բանավեճում միշտ առկա է 2 կողմ՝ համաձայն ենք, համաձայն չենք:  
«համաձայն ենք» թիմը միշտ պաշտպանում է քննարկվող հարցադրման կամ բանաձևի մեջ արտահայտված դիրքորոշումը
2. «համաձայն չենք» թիմը՝ ներկայացնում է հակադրվող դիրքորոշում

«Համաձայն ենք » թիմին տրվում է առաջինը խոսելու իրավունք, քանի որ «Համաձայն չենք » թիմը չի կարող պաշտպանել կամ մերժել քննարկվող խնդիրը, մինչև չիմանա, թե կոնկրետ ինչ «մեղադրանքներով» և առաջարկներով է հանդես գալիս հակառակորդ թիմը: Նմանապես «Համաձայն ենք» թիմին է տրվում նաև առաջինը եզրափակիչ ելույթ ունենալու իրավունքը: Դեմ հանդես եկող թիմն իր հերթին պետք է կասկածի տակ դնի հակառակորդ թիմի առաջարկած դիրքորոշումը, հիմնավոր փաստարկներով հերքի այդ դիրքորոշումը, որոշակի պնդումներով և ապացույցներով ներկայացնի իր դիրքորոշումը:

### **Հաջող ելույթի համար՝**

հարկավոր է հաշվի առնել հետևյալ նախապայմանները՝ պլանավորում, գրառումների անհրաժեշտություն, պնդումների համարակալում, ելույթի կառուցվածք, ներկայացում:

### **Բանավեճի կառուցվածքը՝**

- «Համաձայն ենք» թիմի ներածական խոսք  
Հարց ու պատասխան
- «Համաձայն չենք » թիմի ներածական խոսք  
Հարց ու պատասխան
- «Համաձայն ենք » թիմի եզրափակման խոսք
- «Համաձայն չենք » թիմի եզրափակման խոսք

Դիրքորոշումը պաշտպանելու համար անհրաժեշտ է ներկայացնել պնդումներ և փաստեր: Պնդումները հիմնավորվում են փաստերի միջոցով, որոնց ամբողջությունը կոչվում է փաստարկ: Հետևաբար, ցանկացած դիրքորոշում ներկայացվում է փաստարկների միջոցով:

## Բանավեճի ամփոփումը

Աշխատանքը ամփոփելիս աշակերտները մեկնաբանում են իրենք կատարած աշխատանքը՝ արտահայտելով իրենց իսկ ունեցած կարծիքը ու գնահատականը: Բարձրաձայնում այն համոզմունքները, որոնք ձեռք են բերել աշխատանքի կատարման ընթացքում:

## Արդյունքում՝

- . բոլոր մասնակիցները հավասար են,
- . յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը արտահայտելու,
- . աշխատանքի մեջ ներգրավված են բոլորը,
- . ոչ մի աշակերտ չի քննադատվում:

Քննադատական մտածողության համար կիրառվում են մի շարք խաղ-վարժություններ, հարցերի միջոցով քննարկումներ: Օրինակ՝

Մովորել հարցեր տալ – ցանկացած գիտելիքի տակ թաքնված են հետաքրքրությունն ու հարցադրումները, որոնք հանգեցնում են պատասխանների միջոցով գիտելիքի ձեռքբերմանը: Ընդ որում, ճիշտ հարցադրումներ կատարելու դեպքում, ռացիոնալ գիտելիք որսալու շանսը ավելի է մեծանում: Օրինակ, եթե օրական 5 հարց ուղղենք ինքներս մեզ կապված որևէ թեմայի կամ քիմիական որևէ տարրի վերաբերյալ, դրանք ուսումնասիրենք տարբեր տեսանկյուններից, տանք պարզաբանումներ ու եզրահանգումներ կատարենք, գիտելիքի վազբուղում մեզ, գրեթե, անհնար կլինի հաղթել:

Կարդալ ու վերլուծել տեքստերը – տեղեկատվության կրկնությունների ու վերլուծությունների շնորհիվ զարգանում է քննադատական մտածողությունը: Պետք է արևոհատ հարցեր տանք ինքներս մեզ՝ ի՞նչ ենթատեքստ է թաքնված տվյալ նյութի տակ, ի՞նչքանով է արդարացված այն, մի՞թե կատարված եզրահանգումը միակն է, թե՞ ես նույնպես կարող եմ իմ կատարած ուսումնասիրությունների արդյունքում նոր արդյունք գրանցել, և, եթե այո, ապա

որքանով կարող եմ այն արդարացնել որպես ճշմարիտ տեղեկություն: Կամ, եթե, օրինակ, կատարում եմ քիմիայի խնդրի լուծում, մի՞թե լուծման միայն մեկ

տարբերակ գոյություն ունի. հնարավոր է դրանք շատ են, արդյո՞ք ես չեմ կարող դրանք գտնել: Ի՞նչ փաստարկներ են կրավել խնդրի լուծման գործում և դրանք որքանո՞վ են ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում ձևակերպված խնդրին:

Թարմացնել գիտելիքները – մենք մշտապես կարող ենք օգտվել համացանցից, YouTube-յան տարբեր ալիքներից՝ դիտելով բազմաթիվ տեղեկատվական տեսադասեր, տեսահոլովակներ և, նույնսիկ, վավերագրական ֆիլմեր ցանկացած թեմայով, այդ թվում նաև՝ քիմիայից՝ տարրերի առաջացման կամ պրոցեսների վերաբերյալ վավերագրական ֆիլմեր:

Մեծացնել գիտելիքների ծավալը - որքան շատ ենք տեղեկացված, այնքան ավելի ենք քննադատող, դատող: Որքան շատ են գիտելիքները, այնքան շատ են հարցերը, սիկ որքան շատ են հարցերը, այնքան շատ ու բազմատեսակ են պատասխանները: Շատ դեպքերում, երբ գիտելիքի ծավալը մեծանում է, փոխվում են նաև ճշմարտությունները: Ուրեմն այդ ինչու՞ չանենք հիմա, և ինչու՞ չանենք հենց մենք:

Մտածել բարդ իրավիճակներ - աչքի տակ պահել լուծման՝ հնարավոր ու անհնարին թվացող բոլոր տարբերակները:

Գտնել տարբերակներ – կախված տարբեր գործոններից ու հնարավոր տարբերակներից՝ գտնել լավագույնը կամ հարմարավետը լուծումներից:

Տեսնել գործողությունների հնարավոր վերջաբանը – հաշվարկել բոլոր ռիսկերը սխալվելու և ընդունել բոլոր տարբերակները ճիշտ արդյունքի հասնելու: Այդպիսով հնարավորինս նվազագույնի կհասցնենք ձախողման ռիսկը և անդունքում ակնկալվող բացասական արդյունքների թիվը:

Վերլուծել սխալները – չի սխալվում նա, ով ոչինչ չի անում, և, եթե չսխալվենք, չենք հասնի ճշմարտությանը, իսկ կատարյալ ճշմարտությունը ազատության մեջ է. մենք գատ ենք մեր որոշումների մեջ, այդ թվում, նաև՝ մեր սխալների մեջ:

Լսել ու ընդունել տարբեր գաղափարներ – հաշվի առնել մյուսների կարծքները, լսել դրանք, հասկանալ ու ընդունել. դիտարկել բոլոր իրավիճակները և գալ

ընդհանուր՝ բոլորի համար շահավետ գաղափարի ընդունման:

**Եզրակացություն**

Ուսուցման ինտերակտիվ մեթոդը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև զարգացնում է քննադատական մտածողությունը, գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու հարստացմանը:

Մեթոդի շնորհիվ աշակերտները՝

- . դառնում են քննող դատողություններ և վերլուծություններ կատարող, առաջադրում են խնդրի վերաբերյալ լուծումներ: Դասարանում գլխավոր դերակատարողը դառնում է աշակերտը, գերակայում է աշակերտակենտրոն ուսուցումը,
- . կարողանում են գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի,
- . աշակերտները կարողանում են որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում միմյանց հետ,
- . կարողանում են կատարել ուսումնական ստեղծագործական աշխատանք,
- . կարողանում են քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած տեղեկություն,
- . կարողանում են նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքների համակարգում:

Արդյունքում պարզ դարձավ, որ՝

. «Բանավեճ մեթոդը կարող է արդյունավետ կիրառվել տարրական դպրոցում և նպաստել կրտսեր դպրոցականների քննադատական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը մանկավարժական հետևյալ պայմանների

դեպքում, բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում, ուսուցման գործընթացի միջոցների, մեթոդների, ընթացակարգի ճիշտ ընտրություն, ուսումնական գործունեության բազմազան տեսակների

կիրառում, ուսման դրական ու ներքին դրդապատճառների ձևավորում, դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում, ուսուցչի մասնագիտական պատրաստվածության առկայություն: Տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդների ընտրությունն անմիջականորեն պակված է ուսուցանվող նյութի բովանդակության, բարդության և ծավալի հետ:

. Հասարակական բուռն զարգացումները, ժամանակակից կրթական բարեփոխումները կյանքի են կոչել նոր՝ տնտեսական, գիտական, մշակութային և այլ պահանջներ, որոնք էլ պայմանավորել են մանկավարժական գործընթացի արմատական փոփոխությունները՝ ուսուցիչ աշակերտ հարաբերությունների վերանայում, դասավանդման նոր մեթոդների և ձևերի, մանկավարժական նոր տեխնոլոգիաների որոնում ու կիրառում և այլն: Ժամանակակից ուսուցման գործընթացում կրթության հիմնախնդիրների շարքում իր կարևոր տեղն ունի սովորողների քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը, որն այսօր դիտարկվում է որպես հասարակական պահանջ և կրթության արդի խնդիր:

. Տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում պարզ դարձավ, որ ինտերակտիվ Բանավեճ մեթոդը կարող է արդյունավետ կերպով կիրառվել ժամանակակից տարրական դպրոցի ուսուցման գործընթացում որպես քննադատական մտածողությունը զարգացնող միջոց:

. «Բանավեճի մեթոդը նպաստում է ոչ միայն սովորողների քննադատական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը, այլ նաև՝ հանրակրթության պետական չափորոշի մյուս բաղադրիչների՝ գիտելիքների համակարգի, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողությունների ու հմտությունների և սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. Խաչատրյան Ս. Գ. , Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում, Գ. 2006.
2. И. В. Муштавинская, Технология развития критического мышления на уроке и в системе подготовки учителя, Уроки для педагогов, Учебно-методиич. пособие, изд. Каро, Санкт-Петербург, 2009,
3. Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, Գործիմաց մոտեցում, Տեսություն և պրակտիկա, ձեռնարկ ուսուցիչների պատրաստման համար, ԱՅՌԵՔՍ, Եր., 2004, - 196 էջ
4. С. И. Заир-бек, И. В. Муштавинская Развитие критического мышления на уроке: Пособие для учителя. М., “Просвещение”, 2011. – 223 с.
5. Հարությունյան Գ .Ն ., «Տարրական դպրոցի ուսուցիչը և նրա աշխատանքը սովորողների քննադատական մտածողության զարգացման ուղղությամբ»,
6. Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Երևան-2002
7. Գիտամեթոդական հանդես նախաշավիղ 2. 2001, 2. 2006, 5-6. 2004
8. Ժողովածու Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի, Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար, Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. Տեսություն և պրակտիկա: Գիտաժողով /2012թ. դեկտեմբերի 14/, I պրակ, Երևան, «Մանկավարժ», 2013 թ., էջ 434